ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ 1935 Թ.
ԿՈՆԿՈՒՐՍ ՄՐՑՈՒԹՅՈՒՆ

# ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

## ԼԱՎԱԳՈՒՅՆ ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴԻ ԿՈՆԿՈՒՐՍ ՄՐՑՈՒԹՅԱՆ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ, ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՑԵՎ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՑԵՎ ԶԱՐԳԱՑՆԵԼՈՒ ԳԾՈՎ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

338.1
Ա-94

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԱԴՐԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ
ԿԱԶՄԲԱԺՆԻ
ԲԱԳՈՒ — 1935

338.1
Ա-94

Խմբագրեց՝ Հ. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ
Թարգմանեց՝ Մ. ԴԱՎԹՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Կ. ԹԱՌԼԱՆՅԱՆ

Главлит № 5506
Заказ № 2764
Тираж — 2000
Тип. „III Интернационал"

Ց 35-Ա
Ս 2914

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ 1935 Թ. ԿՈՆԿՈՒՐՍ ՄՐՑՈՒԹՅՈՒՆ

Հաստատված է Համաադրբեջանյան Կենտրոնական կոնկուրսային հանձնաժողովի նիստում 1935 թ. հունիսի 15-ին:

# ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

## ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ, ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՅԵՎ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՅԵՎ ԶԱՐԳԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Անասնաբուծության գործը պետք է իրենց ձեռքը վերցնեն ամբողջ կուսակցությունը, մեր բոլոր կուսակցական և անկուսակցական աշխատողները, նկատի ունենալով, որ անասնաբուծության պրոբլեմն այժմ հանդիսանում է այնպիսի առաջնահերթ պրոբլեմ, ինչպիսին հանդիսանում էր յերեկ հաջողությամբ լուծված հացահատիկային պրոբլեմը»
(*ՍՏԱԼԻՆ. Համկոմկուսի (բ) 17-րդ համագումար*):

*Անասնաբուծության հարցերի շուրջը կոլտնտեսային և աշխատավոր գյուղի մասսաների մոբիլիզացիայի, կուսակցական և խորհրդային կազմակերպությունների ուշադրության ուժեղացման հետևանքով ընկ. Ստալինի ցուցմունքը՝ 1934 թվին վերջ անասնաբուծական*

25.02.2013

29118

տնտեսության մեքենքի նկատմամբ ընկլում-ստեղծելու մասին, մեզ մոտ գործնական լուծում է ստացել: Դրա մասին ցայտուն կերպով վկայում են 1934 թվի հետեվյալ հիմնական ցուցանիշները. կոլտնտեսային գյուղացիական սեկտորում գլխաքանակն աճել է՝ խոշոր եղջերավոր անասուններինը՝ 14,6 տոկոս, ոչխարներինը և այծերինը 19,5 տոկոս, խոզերինը 64,6 տոկոս: Կոլտնտեսային ապրանքային ֆերմաների քանակը 864-ից 1934 թ. հունվարի 1-ից ավելացել է և 1935 թվի հունվարի մեկին հասել մինչև 1602-ի, դրանցում ընդգրկված գլխաքանակն աճել է խոշոր եղջերավոր անասուններինը՝ 27,8 տոկոս, ոչխարներինը և այծերինը 23,9 տոկոս, խոզերինը 67 տոկոս:

Բայց ձեռք բերված նվաճումները հանդիսանում են ԱՍԽՀ անասնապահության վերելքի միայն առաջին աստիճանը: Առաջներում հսկայական խնդիրներ են կանգնած, վորոնք պահանջում են ավելի բարձրացնել աշխատավոր մասսաների ստեղծագործական ակտիվությունն ու ինքնագործունեությունը:

Դրան զգալիապես պետք է նպաստեն ԽՍՀՄ Կենտգործկոմի կողմից հայտարարված գյուղխորհուրդների համամիութենական կոնկուրս-մրցությունը և Թիֆլիս քաղաքում ԱՍՖԽՀ և Հյուսիսային Կովկասի մարզի միջև կնքված սոցմրցման պայմանագիրը՝ անասնապահության զարգացման-ցուցանիշների համար:

Աշխատանքի տեսակետից գյուղխորհրդի համար կոնկուրս-մրցությունը պետք է սերտորեն շաղկապվի լավագույն անասնապահական ապրանքային ֆերմայի և 1937 թվի գյուղատնտեսական մթերումների նախապատրաստման համամիութենական կոնկուրսի հետ:



ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
Им. А. Мясникяна
Ա. Մյասնիկյանի անվ.
59551-66

Առաջավոր գյուղխորհուրդները, վորոնք լծվում են կոլտնտեսություններում, խորհտնտեսություններում, ինչպես նաև կոլտնտեսականների տնտեսություններում սոցիալիստական անասնապահության աճումը կազմակերպելու գծով լավագույն գյուղխորհրդի մրցությանը, պետք է լայն կազմակերպչա-մասսայական աշխատանք ծավալեն կոնկուրսի շուրջը և բոլշևիկորեն ապահովեն սոցիալիստական անասնապահության հետագա վերելքն ու ծաղկումը:

Ինչպես ամենուրեք անասնապահության վերելքի համար մղվող պայքարի հաջողությունը վճռում են կադրերը: «Կադրերը վճռում են ամեն ինչ» (Ստալին): Այստեղից գործնական խնդիր՝ կոնկուրսի ընթացքում շեշտը դնել անասնապահների կադրերի ստեղծման, պատրաստման, ամենայն խնամքով աճեցնելու, նրանց տեխնիկական մակարդակը բարձրացնելու վրա, «վորովհետև տեխնիկան, առանց տեխնիկային տիրապետած կադրերի մեռած է» (Ստալին):

Խորհուրդների հիմնական խնդիրն այդ կոնկուրսում հանդիսանում է անասնապահության զարգացման պետական պլանի ճիշտ կատարումը և նոր կոլտնտեսային կանոնադրության համապատասխան կետերի պարտաճանաչ կատարումն ու կենսագործումը: Իրենց աշխատանքում գյուղխորհուրդներն այդ դեպքում պետք է ելնեն ԱՍՖԽՀ Հյուսիսային Կովկասի հետ կնքված սոցմրցման պայմանագրի կատարման խնդիրներից: Ելնելով այդ խնդիրներից, կոլտնտեսություններում, խորհտնտեսություններում և կոլտնտեսականների տնտեսություններում սոցիալիստական անասնապահության աճումը կազմակերպելու գծով լավագույն գյուղ

խորհրդի համամիութենական կոնկուրսին լծված գյուղխորհուրդը պետք է կատարի արտադրական հետևյալ հիմնական ցուցանիշները:

## I. ԿԱՏԱՐԵԼ ՅԵՎ ԳԵՐԱԿԱՏԱՐԵԼ ԳԼԽԱՔԱՆԱԿԻ ԲԱԶՄԱՑՄԱՆ ՈՒ ՄԱՏՂԱՇՆԵՐՆ ԱՃԵՑՆԵԼՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՊԼԱՆԸ:

*Դրա համար գյուղխորհրդին անհրաժեշտ է.—*

1. *Ապահովել գլխաքանակի լավագույն պահպանումը և մատղաշների աճեցումը: Առավելագույնս կրճատել հորթերի, գառների, գոճիների և քուռակների անկումը, գերակատարել մատղաշների աճեցման պետական պլանը՝ 1936 թվի հունվարի մեկին յեղած եգերից հետևյալ չափերով.*

### ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ՖԵՐՄԱՆԵՐԻ ԳԾՈՎ.

*Հորթեր և գոմշուկներ վոչ պակաս քան 2 տոկոս պետական պլանից ավելի.*

*Գառներ ու ուլեր վոչ պակաս քան 5 տոկոս պետական պլանից ավելի.*

*Գոճի վոչ պակաս քան 3 տոկոս պետական պլանից ավելի.*

*Քուռակներ և ջորիք, ուղտ վոչ պակաս քան 1 տոկոս պետական պլանից ավելի:*

### ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՅԵՎ ՄԵՆԱՏՆՏԵՍՆԵՐԻ ՀՈՏԻ ԳԾՈՎ

*Հորթեր և գոմշուկներ վոչ պակաս քան 2 տոկոս պետական պլանից ավելի.*

*Գառներ և ուլեր վոչ պակաս քան 3 տոկոս պետական պլանից ավելի.*



*Գոճիներ վոչ պակաս քան 2,5 տոկոս պետական պլանից ավելի:*

3. *Առ մեկը հունվարի 1936 թվի կոլտնտեսային ապրանքային ֆերմաներում պետական սահմանված պլանից դուրս ավելացնել անասունների գլխաքանակը՝ ի հաշիվ մատղաշների աճեցման և գլխաքանակի հիմնական մասի լավագույն պահպանման առաջավորությունները գերակատարելու՝ հետևյալ ճանապարհով.— լավագույն խնամք և պահպանում, հիվանդությունների ու անկման առավելագույն կրճատումը, պարտադիր հանձնումներին, — ամենավատ անասունները տալ, հոտի լավագույն պահպանումը կորուստից և ցաք ու ցրիվ անելուց, ինչպես նաև ֆերմաների հոտի համալրման պլանի լրիվ կատարումը՝ ի հաշիվ կոլտնտեսականներից, խորհտնտեսություններից անասուններ գնելու և կոնտրակտացիայի յենթարկելու վոչ պակաս քան.—*

### ԿԱՖԻ ԳԾՈՎ.

*Ամբողջ գլխաքանակը վոչ պակաս 2,6 տոկոս պետական պլանից ավելի:*

*Այդ թվում եգեր — վոչ պակաս 1 տոկոս պետական պլանից ավելի.*

### ՎԱՖԻ ԳԾՈՎ.

*Ամբողջ գլխաքանակը վոչ պակաս քան 3,3 տոկոս պետական պլանից ավելի. այդ թվում. եգեր վոչ պակաս քան 3,5 տոկոս պետական պլանից ավելի:*

### ԽԱՖԻ ԳԾՈՎ.

*Ամբողջ գլխաքանակը—վոչ պակաս քան 2,4 տոկոս պետական պլանից ավելի, այդ թվում մերուներ վոչ պակաս քան 2 տոկոս պետական պլանից ավելի:*

3. «Կոլտնտեսային ապրանքային ֆերման համարելով կոլտնտեսային անասնաբուծության լավագույն ձևը» (Համկոմկուսի (բ) Կենտկոմի հունիսյան պլենումի վորոշում) յուրաքանչյուր կոլտնտեսությունում կազմակերպել ապրանքային ֆերմա, կոլտնտեսությունների սեփական գլխաքանակի աճի, կոլտնտեսականներից, մենատնտեսներից և խորհտնտեսություններից անասուններ գնելու ճանապարհով:

4. Լիովին կենսագործել ապրանքային ֆերմաներ ունեցող կոլտնտեսությունների անդամների արտոնությունները՝ մսամթերման, կաթի և բրդի հանձնման գծով, ինչպես նաև լիովին արտոնություն տալ այն կոլտնտեսականներին և մենատնտեսներին, վորոնք կոնտրակտացիայի յեն յենթարկում հորթերը՝ ֆերմայի և կովազուրկ կոլտնտեսականների համար:

5. Կոլտնտեսականների անհատական և մենատնտեսների անասունների վերաբերմամբ մատղաշների աճեցման պետական պլանը գերակատարելու և ամբողջ գլխաքանակի պահպանումն, ավելի հոգատար խնամք կազմակերպելու ճանապարհով 1935 թվի հունվարի 1-ի համեմատությամբ մինչև 1936 թվի հունվարի 1-ը գլխաքանակն աճեցնել վոչ պակաս քան.

Խոշոր յեղջերավոր անասուններ — ընդհանուր գլխաքանակի վերաբերմամբ 17,2 տոկոս, վորից կովեր 7 տոկոս.

Վոչխարներ և այծեր ընդհանուր գլխաքանակի վերաբերմամբ 19 տոկոս, վորից մաքեր — 23 տոկոս.

Խոզեր — ընդհանուր գլխ. վերաբ. 19,3 տոկոս, վորից մերուն 26,7 տոկոս:



6. Առանձնակի նշանակություն տալով կոլտնտեսային ֆերմաներում և կոլտնտեսություններում ձիերի գլխաքանակի աճին, մատղաշների պետական պլանը գերակատարելու հաշվին և հիմնական գլխաքանակը լավագույն կերպով պահպանելու, բանող ձիերը ճիշտ օգտագործելու, զոո — վետերինար սպասարկումը լավ կազմակերպելու ճանապարհով, ապահովել ձիաապրանքային ֆերմաներում ձիերի գլխաքանակի աճը (վոչ պակաս 2,5 տոկոս ավելի պետական պլանից), իսկ կոլտնտեսականների ու մենատնտեսների մոտ 1935 թվի հունվարի 1-ի համեմատությամբ առ 1-ն հունվարի 1936 թվի ապահովել գլխաքանակի աճ—ձիերինը վոչ պակաս 3,5 տոկոս, եշերինը և ջորիներինը վոչ պակաս 12,0 տոկոս:

7. Ձիերի գլխաքանակի ընդլայնված վերարտադրության նպատակով ուսումնասիրել մատակների վողջ գլխաքանակը, կամ մի մասը աշխատանքից ազատելու հնարավորությունը (առաջին հերթին ձիաբուծական ֆերմաներում) բայց պարտադիր կերպով ծանր աշխատանքից ազատել առանց բացառության բոլոր այն մատակներին, վորոնք հղի յեն 6 ամիս, բոլոր տեսակի աշխատանքներից՝ ծնելուց 2 ամիս առաջ և 15 օր հետո:

8. Գյուղխորհրդի տերիտորիայում անցկացնել բոլոր ձիերի գլխաքանակի պասպորտիզացիան, հատուկ հսկողություն սահմանելով 1935 թվի մատղաշներին պասպորտներ տալու վրա:

9. Կազմակերպել գլխաքանակի, արտադրանքի և փոխադրական միջոցառումների կատարման օրինակելի հաշվառում:

10. Ինչպես կոլտնտեսություններում, նույնպես և խորհտնտեսություններում անասուններին և ձիերին ամրացնել ստուգված, մշտական, կուլակային տարրերից և լոդրներից մաքրված կոլտնտեսականների կադրեր — ձիապահներ, հովիվներ և այլն:

11. Սիստեմատիկ պայքար մղել անասունների, հատկապես մատղաշների գիշատիչ ոչնչացման և մորթելու դեմ, թույլ չտալով աշխատեցնել 3 տարեկան հասակի չհասած մատղաշ ձիերին:

12. Կոլտնտեսությունների, կոլտնտեսականների և մենատնտեսների անհատական տնտեսություններից անպետք (խոտանված) անասունները մասնավորապես անասունների բազաներում փոխել արդյունավետ անասուններով:

13. Կատարել անասնաշենքերի, գոմերի կառուցման, անասունների շենքերի տաքացնելու և նորոգելու պլանները, ըստ որում հատուկ ուշադրություն դարձնել տեղական շինանյութերի օգտագործման վրա:

14. Հատուկ հսկողություն սահմանել անասունների, ձիերի, խոզերի և ոչխարների ծնի վրա:

## III. ՈՐԻՆԱԿԵԼԻՈՐԵՆ ԱՆՑԿԱՑՆԵԼ ԲԵՂՄՆԱՎՈՐՄԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՆ

Դրա համար գյուղխորհրդին անհրաժեշտ է.

1. Բեղմնավորման կամպանիան կազմակերպել այնպես, որ գյուղխորհրդի տերիտորիայի վրա չմնա չծածկված մադյան, կով, ոչխար, մերուն և այլն, գյուղխորհուրդը պետք է կազմակերպի բեղմնավորման կետերի լայն ցանց:

2. Կոլտնտեսությունների վարչությունները, խորհտնտեսությունների և գյուղխորհուրդները զոոտեխնիկների



հետ միասին հաշվի առնել բոլոր արտադրողներին, դրա — անասնաբուժական քննության ենթարկել նրանց, ընտրել պահեստայիններին և յուրաքանչյուրի համար ծանրաբեռնվածություն սահմանել 35–40 կով-գոմշակով մի բուղային, 25 ոչխար մի խոյի համար, 25 մադյան մի արտադրող ձիու համար: Սահմանել արտադրողների ճիշտ օգտագործում և խնամք նրանց նկատմամբ (ուժեղ կեր տալ, մաքրել և այլն):

3. Կոլտնտեսությունների, խորհտնտեսությունների, կոլտնտեսականների և մենատնտեսների հոտերում և նախիրներում ապահովել հսկողությունը եզների վրա, ինչպես նաև գարնանային արոտներում ձիերի վրա և իր ժամանակին ծածկել նրանց (եթե առաջին ծածկումը արդյունք չի տվել հետևյալ երկրորդ ծածկմանը): Կազմակերպել արտադրողների փոխադարձ օգտագործում, ծածկելով նաև խորհտնտեսության հոտերից հատկապես ընտրված արտադրողներով:

4. Լավագույն արջառներին և քուռակներին ընտրել հետագա տարիներին արտադրողներ դարձնելու համար:

5. Մենատնտեսների հոտում հասարակությանը պատկանող արտադրողները կցել որոշակի տնտեսության, որը և պատասխանատու պետք է լինի նրանց խնամքի համար:

6. Էգերի բեղմնավորման սիստեմատիկ հաշվառում տանել և ամեն օր ստուգել բեղմնավորման պլանի կատարման ընթացքը, բեղմնավորման կամպանիաների ընթացքում կազմակերպել ստերջ (ամուլ) մնացած անասունների մասսայական ստուգումն ու անմիջական ծածկումը: Հատկապես էգերը ցեղական ար-

տաղբողներով (հովատակներ, բուսաններ և այլն) ծածկելու և նրանց ծլման ու աճը հսկելու տանելու գործը կազմակերպել:

## III. ԼԱՅՆԱՑՆԵԼ ՅԵՎ ԱՄՐԱՑՆԵԼ ԿԵՐԱՅԻՆ ԲԱԶԱՆ

Դրա համար անհրաժեշտ է.

1. Հաստատված օրացուցային ժամկետներում կատարել կերաբույսերի ցանքսի պլանը և խոտհարքի այդ տարվա պլանը, թույլ չտալով խոտի դաշտում մնալը ու չափից ավելի չորանալը, խոտի հարելու և բարդելու միջև կտրվածության առաջացում:

Կերերի արտադրության պլանը կատարել հետևյալ միջոցառումներն անցկացնելով. — մոլախոտերից մաքրելը, քարեր հավաքել, անասնանոցների նախապատրաստումը, անասունների կանգնելու տեղերը կարգի բերելը, նրանց դեզինֆեկցիան և այլն:

Կերաբույսերի ցանքերը վարակվելուց պաշտպանելու գործը կազմակերպել:

2. Կատարել և գերակատարել սիլոսացման պլանը, հատուկ ուշադրություն դարձնելով վայրի բույսերի և բանջարանոցային խոտերի առավելագույն օգտագործմանը: Իր ժամանակին պատրաստել սիլոսային հորերն ու աշտարակները:

3. Կազմակերպել խոտի ժամանակին փոխադրումը անասունների ձմեռանոցները և ճիշտ բարդել այն: Խոտահավաքի, փոխադրման, պահպանման ժամանակ պայքարել կերի կորուստների, հրդեհի և հափշտակման դեմ:

4. Մարգագետիններն ու արոտավայրերը իր ժամանակին և լրիվին կցել օգտագործողներին: Կոլտնտեսությունների և խորհտնտեսությունների հետ պայմանագիր կնքել, ցույց տալով վերջիններիս կողմից կոնկրետ միջոցառումները՝ մարգագետինների ու արոտատեղիների բարելավելու համար:

5. Ձմեռային արոտավայրերում կազմակերպել ձմռան համար կոպիտ կերերի ապահովագրական ֆոնդ՝ մի գլխաքանակին 25 կիլոգ. ոչ պակաս, իսկ ձիերի համար մի տարում 25 ցենտներից ոչ պակաս և փարախներում պահելու ամբողջ ժամանակաշրջանում խոշոր եղջերավոր անասունների կերակրումն ապահովել:

6. Ապահովել անասնաբույծների լայն կուլտուրական սպասարկում՝ քոչավայրերում կարմիր վրաններ, մանկամսուրներ, հրապարակներ, բժշկական կետեր, անասնաբուժական վրաններ և այլն:

7. Ձմեռային և ամառային արոտավայրերում կոլտնտեսային ֆերմաների համար կազմակերպել մշտական և շարժական տիպի կուլտուրական օթևաններ (չոբանների և նախրապահների համար), նրանց կից շինելով կարմիր անկյուններ, մատղաշների և ապաքինվող կարմի տարրերու շենքեր:

8. Կազմակերպված անցկացնել անասունների տեղափոխությունը դեպի ամառային և ապա հետ ձմեռային արոտավայրերը: Անասունների քոչի ժամանակ օգնել անասնապահական խորհտնտեսություններին. նրանց օգնել նաև ցանքսի, բերքահավաքի և խոտհարքի ժամանակ բանվոր հավաքագրելու գործում:

9. Ճիշտ օգտագործել գյուղական արոտավայրերը (նրանց տեղամասերի բաժանելը, ճանապարհներ շինելը և այլն):

## IV. ՎՈՐԱԿԱՊԵՍ ԲԱՐԵԼԱՎԵԼ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԸ

Դրա համար գյուղխորհրդին անհրաժեշտ է.

1. Կոլտնտեսականների և մենատնտեսների բարձր արդյունատու կովերի ու գոմշակովերի կաթնատվության տատանումը կանխելու նպատակով, ֆերմաների կովերի և գոմշակովերի կաթնատվության միջանկյալ հաշվառման, ոչխարների խուզերու բրդի քանակը և խոզերի բեղմնավորությունը որոշելու ճանապարհով՝ ջոկել, վեր հանել բարձրարդյունավետ անասուններին, որոնք յենթակա յեն ցեղային գրքում գրվելու։

2. Հաշվի առնել կոլտնտեսություններում, խորհտնտեսություններում, կոլտնտեսականների և աշխատավոր մենատնտեսների մոտ գտնվող, ցեղայնության գրքում գրանցված ցեղային անասուններին։ Լուրջ ուշադրություն դարձնել բարձր արդյունատու և ցեղային անասուններից ստացված մատղաշների պահպանմանը՝ կերակրման բարելավումը, մաքրելը, նրանց համար լավ շենքեր հատկացնել և այլն։ Լավագույն եզերի բեղմնավորումը անցկացնել լավ արտադրողների միջոցով։

3. Լրովին աճեցնել բարձր արդյունատու անասուններից ստացված մատղաշներին և ապահովել նրանց լավ խնամքը։

4. Բարձրացնել անասունների արդյունավետությունը և ապահովել պետությանը բարձրորակ մթերքների հանձնումը։

ա) Կովերի կաթնատվությունը հարթավայրային շրջանների կոլտնտեսային ֆերմաներում բարձրացնել 70 լիտրով, իսկ անասնապահական շրջաններում 90 լիտրով՝ 1935 թվի փաստական կաթնատվության համեմատությամբ։



բ. Ավելացնել մեծ ոչխարներից ստացվող բրդի քանակը հասցնելով այն.

| | |
|---|---|
| Մերինոսներինը | 4,0 կիլոգրամ |
| Մետիս մերինոսներինը | 2,9 կիլոգրամ |
| Թուշի ոչխարներինը | 2,0 կիլոգրամ |
| Մյուս ցեղերու անգամ խուզվող ոչխարներինը | 2,0 կիլոգրամ |
| Մազախի և Բալբասուի | 1,8 կիլոգրամ |

5. Յուրաքանչյուր կոլտնտեսությունում կազմակերպել արտադրության համաձայնեցված և կոլտնտեսային առևտրի գծով վաճառման յենթակա անասունների գերացումը՝ հասցնելով հետևյալ ցուցանիշների.

Զաղ ոչխարները 70 տոկոս միջին գերությունից բարձր 30 տոկոս, խոշոր յեղջ. անասուն 50 տոկոս և ոչ պակաս չաղությամբ միջին գերությունից բարձր 40 տոկոս և ոչ ավել 10 տոկոս միջին գերությամբ։

6. Ակտիվ մասնակցություն ունենալ շրջանային անասնաբուծական ցուցահանդեսում՝ լավագույն անասունները յերևան բերելու և նրանց ցուցահանդեսի համար պատրաստելու ճանապարհով։ Սիստեմատիկորեն բարձրացնելով մթերատվության ցուցանիշները, իրավունք ձեռք բերել 1937 թվի գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու համար։

7. Հետևել շրջգործկոմի, քաղխորհրդի կողմից սահմանված պարտադիր անասնաբուծական կանոնների կատարմանը։

## V. ՃԻՇՏ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԱՇԽԱՏԱՆՔՆ ՈՒ ՀԱՇՎԵԱՌՈՒՄԸ

Դրա համար գյուղխորհրդին անհրաժեշտ է.

1. Անցկացնել անասնապահական աշխատանքի

ճիշտ հաշվառումը՝ գործարքի հիման վրա, ընդմիշտ վերացնելով անդեմությունը, հավասարարանքը, բրիգադների անդամներին ամրացնել իրենց տեղերում վոչ պակաս յերեք տարով:

2. Բոլոր ֆերմաներում արմատացնել արտադրական հաշվառման ձևերը՝ եզների հաշվառման գիրք, մատղաշների աճեցման ժուռնալ, կթող—անասնապահների հաշվեքարտեր և այլն:

3. Համարակալել ապրանքային ֆերմաների ամբողջ գլխաքանակն ականջի նշաններով, իսկ ձիաբուծական ֆերմաներում բոլոր ձիերին դաղ դնել:

## VI. ԼԱՅՆՈՐԵՆ ԶԱՐԳԱՑՆԵԼ ԹՌՉՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Դրա համար գյուղխորհրդին անհրաժեշտ է.

1. Կոլտնտեսականներին օգնություն ցույց տալ թռչուններ ձեռք բերելու գործում, այն հաշվով, վոր պետք է յուրաքանչյուր կոլտնտեսական ունենա 15 թռչունից վոչ պակաս:

2. Առանձնացնել տնամերձ թռչնաբուծության կազմակերպիչ, կոլտնտեսություններին կից դնել ինկուբատորներ և ճուտեր աճեցնել թուխս դնելու միջոցով:

## VII. ԶԱՐԳԱՑՆԵԼ ՄԵՂՎԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Դրա համար անհրաժեշտ է.

1. Մեղրատու հումքի բազա (այգիներ, մեղրատու խոտեր և այլն) ունեցող յուրաքանչյուր կոլտնտեսությունում ստեղծել մեղվաբուծարաններ:

2. Աշխատել, վոր պետք է յուրաքանչյուր կոլտնտեսական ունենա մեղուների 1–2 ընտանիք:

3. Բացատրել աշխատավորներին, վոր մեղվաբուծությունը բարձրացնում է նրանց յեկամուտներն ու



այգիների, բանջարանոցների, կերաբույսերի բերքատվությունը:

## VIII. ՊԱՅՔԱՐԵԼ ԻՆՖԵԿՑԻՈՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՃԱՐԱԿՆԵՐԻ ԴԵՄ

Դրա համար անհրաժեշտ է.

1. Անմիջական առանձնացնել վարակիչ հիվանդության մեջ կասկածվող անասուններին և հայտնել անասնաբույժին:

2. Նոր գնված և ուրիշ տեղից բերված անասուններին 2 շաբաթվա ընթացքում չթողնել հասարակական արոտավայրը և ջրելու տեղը:

3. Յուրաքանչյուր գյուղում կազմակերպել անասունների թաղելու տեղ, ուր և պարտադիր կերպով տեղափոխել սատկած անասունների դիակները:

4. Կատարել համաճարակի վերացման համար անասնաբուժական անձնակազմի տված բոլոր ցուցմունքները, կոլտնտեսություններում ընտրել անասնաբուժական սանիտարներ, յուրաքանչյուր գյուղում անասնաբուժական կետ և կազմակերպել անասնաբուժական դեղարկղ:

## IX. ՊԱՅՔԱՐԵԼ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ԿՈՎԱԶՐԿՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Դրա համար գյուղխորհրդին անհրաժեշտ է.

1. Կովազուրկ կոլտնտեսականներին կոնտրակտացիայի և հորթեր տալու գծով վերացնել նրանց կովազրկությունը. այն կոլտնտեսություններում, ուր կովազրկությունը վերացված է, կազմակերպել և անցկացնել կոլտնտեսականների և աշխատավոր մենատնտեսների հորթերի կոնտրակտացիան ու աճեցումը,



БИБЛИОТЕКА ИНСТИТУТА

ուրիշ գյուղխորհրդի կոլտնտեսականներին տալու համար: Կազմակերպել կոլտնտեսականներից և աշխատավոր մենատնտեսներից մատղաշներ գնելու գործը՝ նոր ֆերմաներ կազմակերպելու և յեղած ֆերմաներում գլխաքանակն ավելացնելու նպատակով:

2. Ապահովել, վոր այն կոլտնտեսականներին և մենատնտեսներին, վորոնց հորթերը կոնտրակտացիայի յեն յենթարկված, տրվեն կաթի և մսի համաձայնման գնով կառավարության վորոշումներով նախատեսված արտոնությունները:

3. Կատարել կոլտնտեսականների, մենատնտեսների արջառների կոնտրակտացիա և կազմակերպել նրանց աճեցումը՝ կոլտնտեսության քաշող ուժ ստանալու համար, արջառների վրա հոգատար խնամք սահմանելով:

## X. ԲԱՐԵԼԱՎԵԼ ԿՈՒԼՏՈՒՐ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Դրա համար գյուղխորհրդին անհրաժեշտ է.

1. Բոլոր կոլտնտեսային ֆերմաները կուլտուրական դրության մեջ դնել, ֆերմայի մերձակա հողամասը ծառատնկել ճանապարհով:

2. Բոլոր չոբաններին, հովիվներին, նախրապաններին ապահովել տաք վերարկուով, յափունջիներով, շինելներով (պլաշչով) բաշլղներով, իսկ կով կթողներին գոգնոցներով և խալաթներով:

3. Առևտրական ցանցի միջոցով կազմակերպել չոբաններին բոլոր տիպի ապրանքներով — (կոշիկներ, տրեխներ, բաժակներ, պատառաքաղներ, դանակներ և այլն) անհրաժեշտ դեղորայքներով, սապոնով և սրբիչներով մատակարարելու գործը:



4. Բոլոր անասնապահական ֆերմաների կից կազմակերպել զոո — անասնաբուժական խմբակներ, առաջին հերթին խոշոր ֆերմաներն ապահովելով գրականությամբ:

Գյուղխորհուրդների համամիութենական կոնկուրս մրցության մեջ առաջնություն ձեռք բերելու և անասնաբուծության վերելքի ու զարգացման մեջ հաջողություններ ունենալու համար գյուղխորհուրդը պետք է այս հիմնական արտադրական ցուցանիշների կատարման և գերակատարման պայքարի շուրջը կազմակերպի և ներգրավի գյուղի աշխատավորական մասսաներին— գյուղխորհրդի ակտիվին, խորհտնտեսությունների բանվորներին, կոլտնտեսականներին, հատկապես կանանց:

Դրա համար գյուղխորհրդին անհրաժեշտ է.

1. Գյուղխորհրդի պլենումում, խորհտնտեսությունների բանվորների, կոլտնտեսականների, անասնապահ — մասնագետների շարքերում, անասնապահական անկյունների, չոբանների, հովիվների, նախրապանների, կթողների, ձիապահների շարքերում, պատգամավորական խմբակներում լայնորեն մշակել խորհուրդների կոնկուրս — մրցության խնդիրները, Անդրերկրկոմի գործկոմի վորոշումները՝ խորհուրդների կոնկուրսի մասին և կոնկուրսի արտադրական ցուցանիշներին համապատասխան կոնկրետ պարտավորություններ վերցնել կոլտնտեսություններում, խորհտնտեսություններում, ինչպես և կոլտնտեսականների տնտեսություններում սոցիալիստական անասնաբուծությունը զարգացնելու գծով:

2. Աշխատանքը կազմակերպել և հետևել, վորպեսզի անասնաբուծական սեկցիաները՝ պաշտպանողական խմբակները կոլտնտեսություններում, խորհտնտեսություններում, կոլտնտեսային ապրանքային ֆերմաներում, զոո — անասնաբուժական կետերում, զոոտեխնիկական և անասնաբուժական աշխատողները ակտիվորեն լծվեն կոնկուրսին և աշխատեն կոլտնտեսություններում, խորհտնտեսություններում ինչպես և կոլտնտեսականների անհատ տնտեսություններում զարգացնել սոցիալիստական անասնաբուծությունը:

3. Ամրապնդել անասնաբուծական սեկցիայի աշխատանքները, ակտիվություն մտցնել նրա աշխատանքում, սիստեմատիկորեն, ոպերատիվ կերպով, պարզորոշ ղեկավարել նրանց, ցույց տալ ամենորյա գործնական օգնություն, կոնկրետ ցուցմունքներ տալ և ստուգել կատարումը: Ստեղծել զոոտեխնիկական խմբակներ, յուրաքանչյուր կոլտնտեսությունում կազմակերպել անասնաբուծության վորակի տեսչություն:

4. Կոլտնտեսային փորձը տարածելու նպատակով անասնաբուծական ապրանքային ֆերմաներ ունեցող կոլտնտեսություններում կազմակերպել զոոտեխնիկական ուսանելի խրճիթ — լաբորատորիաներ:

5. Վոչնչացնել դիմազրկության բոլոր մնացորդները: Յուրաքանչյուր անասունի, կովի, հորթի, յուրաքանչյուր ձիու, արտադրողի համար պատասխանատու պետք է լինի վորոշակի անձնավորություն:

6. Լայն ծավալել աշխատավոր մասսաների նախաձեռնությունը: Բարձրացնել դասակարգային զգոնությունը: Ամուր հարվածել կուլակային մնացորդություններին, վորոնք տապալում են սոցիալիստական



անասնապահության վերելքի համար խորհրդային իշխանության ձեռք առած միջոցառումները:

7. Ամենայն ուշադրություն դարձնել անասնաբուծական աշխատողների, սեկցիաների, ֆերմաների վարիչների, հովիվների, չոբանների, ձիապահների, կթողների և այլն կադրերի ընտրության, առաջքաշման և ամրապնդման, այդպիսիներին առաջ քաշելով լավագույն ակտիվիստներից:

8. Սեկցիաների, պաշտպանողական խմբակների, կոլտնտեսությունների, բրիգադիրների միջև, ձիապահների, կթողների, չոբանների, գյուղխորհրդի լիազորների միջև անասնապահ — մասնագետների միջև և այլն լայն ծավալել սոցմրցումն ու հարվածայնությունը՝ սոցիալիստական անասնաբուծության բնագավառում լավագույն աշխատանքի համար, վերցրած պարտավորությունները կատարելու համար: Նրանցից առաջավորների փորձը տալ հետ մնացողներին: Սոցմրցման մեջ մտնել մյուս գյուղխորհուրդների հետ: Սիստեմատիկորեն ստուգել սոցմրցման պայմանագրով և կոնկուրսի գծով վերցրած պարտավորությունների կատարումը:

9. Կատարել ընտրողների նակազի համապատասխան կետերը՝ սոցանասնաբուծության զարգացման գծով և ընտրողների առաջ խորհրդի և նրա պատգամավորների հաշվետվությունները դնել՝ իրենց գործունեության մասին:

59551-66

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀԱՍՌ Арм ССР
им А Мясникова
Ա. ՄՅԱՍ[…] ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0204842

29.718

# Производственные показатели

## КОНКУРСОВ-СОРЕВНОВАНИЙ ПО ОРГАНИЗАЦИИ И РАЗВИТИЮ СОЦ. ЖИВОТНОВОДСТВА

Изд. Оргтотдела АзЦИКа

Баку — 1935